

**«ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԲԸ տնօրենի ժ/պ
պարոն Մ. Քալաշյանին**

Հարգելի՛ պարոն Քալաշյան,

Ի պատասխան Ձեր ծանուցման՝ կից Ձեզ եմ ներկայացնում կնքված և ստորագրված N «ԵՏ-ԳՀԾՁԲ-22/02» ծածկագրով պայմանագիրը՝ երկու օրինակից, ինչպես նաև որակավորման և պայմանագրի ապահովումները /միակողմանի հաստատված հայտարարությունների՝ տուժանքների ձևով/ մեկական օրինակից:

**«ՋԱԿՈ ԱՎՏՈԴԵՏ» ՍՊԸ-ի
ՏՆՕՐԵՆ՝ Հ. ՊՈՂՈՍՅԱՆ**



« 04 » « 08 » 2022թ.

**«ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՏ-ԳՀԾՁԲ-22/02**

ք. Երևան

«08» 08 2022թ.

«ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԲԸ-ը ի դեմս տնօրենի ժ/պ՝ Մ. Քալաշյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ջակո Ավտոդետ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Պողոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 11000000 (տասնմեկ միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին,

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝
ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxԲ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ*-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ**-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

* 6161010 (վեց միլիոն մեկ հարյուր վաթսուներեկ հազար տասը) ՀՀ դրամ,

** 6554270 (վեց միլիոն հինգ հարյուր հիսունչորս հազար երկու հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ:

4.4 Պատվիրատուն վճարումը կատարում է իրեն փաստացի մատուցած ծառայության դիմաց՝ հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, իսկ մինչև 30.12.2022 թվականը չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտն Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝

կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է — էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱԿԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԲԸ
ՀՀ. ք. Երևան Լենինգրադյան 16
Հայրիզնեսքանկ ՓԲԸ
Հ/Հ 1150008842500100
ՀՎՀՀ 00009381

տնօրենի ժ/պ  Մ. Քալաշյան
(ստորագրություն)
Կ.Տ.



ԿԱՏԱՐՈՂ

«Ջակո Ավտոդետ» ՍՊԸ
ՀՀ. ք. Երևան, Դիմիտրովի 1/3
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660004964470100
ՀՎՀՀ 00449313

տնօրենի  Ս. Թողոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ* - ԳՆՄԱՆ ՓԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

		Ծառայության					Մատուցման	
Միջանցիկ օժիտի ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Վաճառողի անվանումը (տեխնիկական բնութագիր)	Չափման միավորը	Ընդհանուր քանակը	Պայմանագրի կատարման առավելագույն գումար (ՀՀ դրամ)	Հասցեն	Ժամկետը	
2/ հ								
1	ԿԻԱ ՍԵՌԱՏՈ մակնշի ավտոմեքենայի տեխնիկական սպասարկման ծառայություններ	<p>ԿԻԱ ՍԵՌԱՏՈ մակնշի ավտոմեքենայի տեխնիկական սպասարկման ծառայություններ</p> <p>Նկարագիր՝ կից Հավելված 1.1</p> <p>Կատարողը պարտավոր է Պատվիրատուի պահանջով տրամադրել տեղեկանք՝ Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխնասպարկման կայան ներկայացնելու օրվա և ժամի մասին:</p> <p>Ծառայությունները պետք է մատուցվեն Երևան քաղաքում:</p> <p>Ծառայությունները պետք է մատուցվեն Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխնասպարկման կայանում գրանցվելու օրվանից հաշված առավելագույնը Երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ առանց պահեստամասի փոխարինման ծառայության դեպքում և առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ պահեստամասի փոխարինման ծառայության դեպքում:</p> <p>Կատարողը պարտավոր է օգտագործել տվյալ ավտոմեքենայի արտադրող ընկերության կողմից արտադրված կամ նրա կողմից երաշխավորված պահեստամասեր և քայտոլեր:</p> <p>Տեխնիկական սպասարկման կայանը պետք է ունենա ստորև նշված նվազագույն հնարավորությունները որակով և ժամանակին տեխնիկական սպասարկում իրականացնելու համար՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Տաքացվող բոքսեր ամբարձիչների վրա նշված ծառայությունների մատուցման հնարավորությամբ: 2. Դրոլերի քանդման, հավաքման և հավասարակշռման ստենդ, 3. անվաբացքի կարգավորման ստենդ, 4. լուսարձակների կարգավորման ստենդ, 5. էլեկտրական բնույթի խափանամները վերացնելու հնարավորություն, 	դրամ	1	1100000	Երևան քաղաքում Կատարողի կողմից տրամադրված հասցեն	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը: Չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվելու է առանց որևէ հետագա պարտավորության:	

		<p>6. արևվազն 1-ական փակամագրո՞ծ, շարժիչագրո՞ծ, ավտոելեկտրիկ, ինժեկտորային մասնագետ, անկախացքի ուղղման մասնագետ, 7. պիստոլոշման սարք նշված ավտոմեքենաների ծրագրով:</p> <p>Կատարողը պետք է ունենա հնարավորություն կատարելու շարժիչի և նրա հանակարգերի, ուժային և ղեկավարման հանակարգերի ընթացային մասի և թափքի, ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ վերանորոգման աշխատանքներ:</p>				
		Ընդամենը			11000000	

պության մատուցման ժամկետը, իսկ փուլային մատուցման դեպքում՝ առաջին փուլի մատուցման ժամկետը, պետք է սահմանվի արևվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով տեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ծառայությունը մատուցել կարճ ժամկետում: Մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«ԵՐԵՎԱՆՏՐԱՍ» ՓԲԸ
 ՀՀ. ք. Երևան Լենինգրադյան 16
 Հայրիզնեսրանկ ՓԲԸ
 Հ/Հ 1150008842500100
 ՀՎՀՀ 00009381

տնօրենի ժ/պ  Ս. Քալաշյան
 (ստորագրություն)



ԿԱՏԱՐՈՂ

«Ջակր Ավտոդետ» ՍՊԸ
 ՀՀ. ք. Երևան, Դիմիտրովի 1/3
 «Էլիկարանկ» ՓԲԸ
 Հ/Հ 1660004964470100
 ՀՎՀՀ 00449313

տնօրեն  Հ. Պողոսյան
 (ստորագրություն)



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆԵՐԸ		
Հ/Հ	SU-1, SU-2 Ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	
	Ցուցանիշներ	
	Ցուցանիշներ	
	ԿԻԱ-ՍԵՈՒԱՏՈ	
	SU-1 Ներառվող ծառայությունների անվանումները	
1	Բռնկման համակարգի ստուգում	1400
2	Սառեցման համակարգի ստուգում	1400
3	Ցուղման համակարգի ստուգում	700
4	Արտաձման համակարգի ստուգում	1400
5	Կցորդման համակարգի ստուգում	1400
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	0
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	1400
8	Առջևի և հետևի կախցիկների աշխատանքի ստուգում	1400
9	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	1400
10	ABS համակարգի ստուգում	1400
11	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	2800
12	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	1400
13	Թափքի վիճակի ստուգում	1400
14	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	1400
15	Շարժիչի հանում և տեղադրում	70000
16	Շարժիչի վերանորոգում	126000
17	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	4900
18	Բ/լիտեռի կախարիչի հանում և տեղադրում	7000
19	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	38500
20	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	1400
21	Շարժիչի գլխիկի հոկում	14000

22	Շարժիչի գլխիկի վերանորոգում	24500
23	Փակամի խցուկի փոխարինում	700
24	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	3500
25	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	3500
26	Հրիչների փոխարինում SOHC	3500
27	Շարժիչի առջևի կափարիչի հանում և տեղադրում	9100
28	Ատամնավոր փոկի փոխարինում	0
29	Ատամնակի փոխարինում	28000
30	Ծնկածև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	4200
31	Ծնկածև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	7000
32	Ծնկածև լիսեռի հղկում	14000
33	Մխոցային օղակների փոխարինում	3500
34	Քիմիական լվացում 1 կտորի համար	3500
35	Կալեկտորի հանում և տեղադրում	14000
36	Թափանիսի հանում և տեղադրում	4200
37	Թափանիսի պլակի հանում և տեղադրում	4200
38	Կարողամային փոխանցման աշխատանքի ստուգում	0
39	Բաշխիչ տուսի աշխատանքի ստուգում	0
40	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	0
41	Շարժիչի կափարիչի միջադիրի փոխարինում	7000
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	0
42	Ցուղի և յուղի գտիչի փոխարինում	1400
43	Ավտոմեքենայի հանգույցների յուղում	1400
44	Ցուղի պոմպի փոխարինում	7000
45	Ղեկավարման բլոկի վերանորոգում	3430
46	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում	7000
47	Բռնկման կարգավորում	3500
48	Օդի գտիչի փոխարինում	0
49	Օդորակիչի գտիչի փոխարինում	0
50	Ինժեկտորի բոցամուղների փոխարինում	3500
51	Ինժեկտորի բոցամուղների մաքրում	4200
52	Բենզամոխի փոխարինում	7000
53	Վառելիքի գտիչի փոխարինում	7000

54	Վառելակյուլուբի փողոցային համուն և տեղադրում	4200
55	Վառելիքի բաքի համուն և տեղադրում	14000
56	Ակսելերատորի համուն և տեղադրում	2800
57	Ակսելերատորի մաքրում	2100
58	CO կարգավորում	0
59	Խառնարանի համուն և տեղադրում	9100
60	Խառնարանի վերանորոգում	0
61	Տրամյորի համուն և տեղադրում	0
62	Տրամյորի վերանորոգում	0
63	Շնչափող փակակի լվացում	7000
64	Շնչափող փակակի համուն և տեղադրում	3500
	3. Սառեցման և արտաժման համակարգ	0
65	Հովիհարի փոկի համուն և տեղադրում	4900
66	Հովիհարի համուն և տեղադրում	9100
67	Կոնդիցիոների ռադիատորի համուն և տեղադրում	9800
68	Կոնդիցիոների ռադիատորի վերանորոգում	17500
69	Ջրի ռադիատորի համուն և տեղադրում	10500
70	Ջրի ռադիատորի վերանորոգում	14000
71	Վառարանի ռադիատորի համուն և տեղադրում	45500
72	Թերմոստատի փոխարինում	5600
73	Ջրի պոմպի փոխարինում	7000
74	Ջրի պոմպի վերանորոգում	0
75	Ընդարձակող բաքի փոխարինում	2100
76	Խլարարի համուն և տեղադրում	4200
77	Խլարարի ներդիրի համուն և տեղադրում	3500
78	Ռադիատորի փողոցային համուն և տեղադրում	3500
79	Վառարանի շարժիչի համուն և տեղադրում	4900
80	Վառարանի ծորակի համուն և տեղադրում	3500
81	Հովակցման հեղուկի փոխարինում	4200
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ	0
82	Բանվ. կամ գլխ. գլանի համուն և տեղադրում	0
83	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	0
84	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	0

85	Կցորդման ուռնակի հանում և տեղադրում	0
86	Կցորդման ճոպակի հանում և տեղադրում	0
87	Կցորդման փողոցակի փոխարինում	0
88	Կցորդման կարգավորում	0
89	ՓՏ-ի հանում և տեղադրում	0
90	ՓՏ-ի վերանորոգում	0
91	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	0
92	ՓՏ-ի պատյակի հանում և տեղադրում	0
93	Վազբաչակի շարժաբերի փոխարինում	0
94	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	16100
95	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	0
96	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	42000
97	ԱՓՏ-ի վերանորոգում	112000
98	ԱՓՏ-ի յուղի գտիչի փոխարինում	4900
99	ԱՓՏ-ի յուղի պոմպի փոխում	14000
100	ԱՓՏ-ի փոխարկիչի փոխարինում	9800
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիտեռ	0
101	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	0
102	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով	0
103	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	0
104	Կարդանային լիտեռի հանում և տեղադրում	0
105	Կարդանային լիտեռի հանում և տեղադրում, վերանորոգ.	0
106	Կարդանային լիտեռի խաչուկի հանում և տեղադրում	0
107	Էլաստիկ մուֆտի հանում և տեղադրում	0
108	Կարդանային լիտեռի միջ. կախոցի հանում և տեղադրում	0
109	Միջանկյալ կարդանային լիտեռի հանում և տեղադրում	0
	6. Առջևի և հետևի կամրջակներ	0
110	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	0
111	Առջևի կամ հետևի կամրջ. լիկատար քանդում և հավաքում	0
112	Առջևի կամ հետևի կամրջ. սնանակի քանդում և հավաքում	0
113	Կամրջակի խցուկի փոխարինում	0
114	Առջևի կամ հետևի կամրջ. կիսառնու. հանում և տեղադր.	0
115	Կիսառնու. առանցքակալի փոխարինում	0
116	Կիսառնու. խցուկի փոխարինում	0

	7. Կայտն		0
117	Առջևի կայտնի փակատար քանդում և հավաքում		28000
118	Տրավերսի հանում և տեղադրում		24500
119	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում		2800
120	Հողակապի տափօղակի փոխարինում		4900
121	Անվակունդի հանում և տեղադրում		4900
122	Անվակունդի առանցքակալի փոխարինում		4900
123	Անվակունդի բացակի կարգավորում		2100
124	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում		8400
125	Հեղույսի փոխարինում		1400
126	Ձախ կամ աջ հողակապի խցուկների փոխարինում		700
127	Ձախ կամ աջ հողակապի առանցքակալների փոխարինում		0
128	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում		4900
129	Չսպանակի հանում և տեղադրում		4900
130	Չսպակի հանում և տեղադրում		0
131	Չսպակի վռանների փոխարինում		0
132	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում		4900
133	Ցնցամեղմիչի լիցքավորում		0
134	Ներքևի լծակի հանում և տեղադրում		5600
135	Ներքևի լծակի վռանների փոխարինում		9100
136	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում		3500
137	Միջին ձգակի հանում և տեղադրում		3500
138	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում		4200
139	Վերևի լծակի հանում և տեղադրում		0
140	Վերևի լծակի վռանների փոխարինում		0
141	Գևոճե հողակապերի փոխարինում		2800
142	Ծայրականների հանում և տեղադրում		2800
143	Առջևի կայունարարի հանում և տեղադրում		4200
144	Հետևի կայունարարի հանում և տեղադրում		0
145	Առջևի կայունարարի վռանների փոխարինում		3500
146	Հետևի կայունարարի վռանների փոխարինում		0
147	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում		0

148	Հետևի գապամանի փոխարինում		3500
149	Հետևի ցնցամեղիչի հանում և տեղադրում		3500
150	Հետևի ձգածողի հանում և տեղադրում		0
151	Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում		0
152	Առջևի կայունարարի կանգնակների հանում և տեղադրում		1400
153	Հետևի կայունարարի կանգնակների հանում և տեղադրում		1400
154	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում		0
155	Անկյունագծային լծակի վրանների փոխարինում		2100
156	Անկաբացքի կարգավորում		10500
157	Չորման աշխատանքներ՝ 1 քառ.սմ համար		1400
158	Ընթացային մասերի աշխատանքի փոխտորոշում		1400
	8. Ղեկային մեխանիզմ		0
159	Ղեկային կայունի հանում և տեղադրում		18900
160	Ղեկային կայունի վերանորոգում		14000
161	Ղեկային ձողի հանում և տեղադրում		14000
162	Ղեկային ձողի նորոգում		17500
163	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վրանների փոխարինում		14000
164	ՂԿ-ի հորակապերի հանում և տեղադրում		0
165	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում		0
166	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում		0
167	Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում		0
168	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում		0
169	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում		0
170	Ղեկային ժապավենի փոխարինում		5600
	9. Արգելակային համակարգ		0
171	Գլխ. գլանի հանում և տեղադրում		5600
172	Գլխ. գլանի վերանորոգում		0
173	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում		5600
174	Վակուումային ուժեղարարի նորոգում		0
175	Բանվ. գլանի հանում և տեղադրում		4200
176	Բանվ. գլանի վերանորոգում		0
177	Արգելակային համակարգի օդահանում		1400
178	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում		2800
179	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում		2800

180	Առջևի սոււպարտի վերանորոգում	3500
181	Հետևի սոււպարտի վերանորոգում	3500
182	Արգելակային փողոսի փոխարինում	3500
183	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	2000
184	Հետևի արգելակային կոճղակների փոխարինում	2000
185	Հետևի թմբուկային կոճղակների փոխարինում	2000
186	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	3500
187	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	3500
188	Արգելակային սկավառակի հղկում	3500
189	Արգելակային թմբուկի հղկում	0
190	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	1400
191	ABS-ի հանում և տեղադրում	5600
192	ABS-ի վերանորոգում	0
193	Ձեռքի արգելակի ճույանի հանում և տեղադրում	5600
194	Ձեռքի արգելակի կարգավորում	3500
195	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	3500
	10. Էլեկտրասարքավորում	0
196	Էլեկտրասարքավորման վերանորոգում	4200
197	Էլեկտրասարքավորումների աշխատանքի էլեկտրոնային ախտորոշում	4900
198	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	3500
199	Գններատորի հանում և տեղադրում	4900
200	Գններատորի վերանորոգում	9800
201	Գններատորի փոկի փոխարինում	4900
202	Մեկնարկիչի հանում և տեղադրում	7000
203	Մեկնարկիչի վերանորոգում	9800
204	Առջևի լապտերի հանում և տեղադրում	4900
205	Հետևի լապտերի հանում և տեղադրում	3500
206	Առջևի լապտերի լամպի փոխարինում	3500
207	Հավանախուլային լապտերի լամպի փոխարինում	1400
208	Արգելակային լապտերի լամպի փոխարինում	1400
209	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	4900
210	Վազբաչակի հանում և տեղադրում	4900
211	Վազբաչակի ճույանի հանում և տեղադրում	4900
212	Սաքերի պանելի հանում և տեղադրում	4900
213	Արագաչակի հանում և տեղադրում	2800

214	Ազդանշանի հանում և տեղադրում	2800
215	Ազդանշանի վերանորոգում	4900
216	Ապակեվազիչի շարժիչի հանում և տեղադրում	2800
217	Ապակեամբարձիչի հանում և տեղադրում	4900
218	Դռների կենտրոնական փակվանի հանում և տեղադրում	4900
